№ 56 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 13 1901 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 13 № 56

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10–2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական աշխարհում. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեկոյ Ռաֆայէլ Էրիսթովի յիշատակին։ Նոր տեսակ վաշխառուներ։ Ռոճկի հարցը Աստրախանում։ Նամակ Մոզդոկից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղացու ցաւերից։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

—

Քաղաքական աշխարհում չէ նկատվում բարեփոխութիւն։ Պետութիւնները շարունակում են զինվել և իրանց պատրաստ պահել պաշտպանվելու անսպասելի բարդութիւնների ժամանակ։ Անգլիան, որ մինչև այժմ պարծենում էր նրանով, թէ նա սակաւաթիւ զօրք է պահում և չունի պատերազմասէր ոգի, որոշել է աւելացնել իր մշտական զինուորների թիւը։ Ամերիկան, որ պահում էր իրան մեկուսացած և չէր խառնվում համաշխարհային քաղաքականութեան մէջ, այժմ մասնակցում է Արևելեան Ասիայի գործերին և հակումն է ցոյց տալիս իր ձայնը լսեցնելու և ուրիշ խոշոր դէպքերում։ Ամերիկայի զօրքերը եւրոպական զօրքերի հետ միասին կանգնում են չինական հողի վրա։ Եապոնիան ուժեղացնում է իր ծովային զօրութիւնը և կարծես պատրաստվում է մի մեծ պատերազմի։ Եւրոպայի ցամաքային պետութիւնները մէկը միւսից յետ չեն մնում աւելացնելու իրանց պատերազմական ոյժը, իսկ Թիւրքիան, գերմանական մասնագէտների ղեկավարութեամբ, այնպիսի պատրաստութիւններ է տեսնում, որ թոյլատրելի է միայն պատերազմի նախընթաց շրջանում։

Ճիշդ է, ոչ ոք չէ ցանկանում պատերազմել, ոչ ոք չէ ուզում վտանգի ենթարկել այն, ինչ որ նա այժմ ունի։ Բայց պատերազմական պատրաստութիւնները իրանց անտանելի ծանրութեամբ և չափազանց ծախքերով հերթական են դարձնում պատերազմ սկսելու և մղելու հարցը։ Պատերազմական ոգին, որ տարածվում է հասարակութեան մէջ, մոցնում է գիւրագրգռութիւն դէպի ամեն մի քաղաքական դէպք և մարդկանց դրդում է դէպի քաղաքական բաղդախնդրութիւն։ Երբէք այնքան հեշտ կերպով չեն խօսեցել պատերազմի հնարաւորութեան մասին, ինչպէս մեր օրերում, երբ պատերազմի գաղափարը կորցրել է իր հին, հերոսական և ասպետական նշանակութիւնը։

Դեռ երկու տարի չը կայ, ինչ ամբողջ երկրագնդի պետութիւնները, ժողովված Հաագայում, միաբերան վկայում էին, թէ պատերազմները կորցրել են իրանց անխուսափելիութեան հիմունքը և թէ կարելի է ազգերի մէջ ծագած անհամաձայնութիւնները հաշտեցնել խաղաղ միջոցներով, օրինակ միջնորդ դատարանի հեղինակութեամբ։ Եւ շատ խելացի էր թւում այն առաջարկը, որ պետութիւնները կարող են կրճատել իրանց պատերազմական ծախքերը որոշ ասիճանով և այդպիսով ազատել ժողովրդական մասսաները այն ծանր զոհաբերութիւններից, որ նրանք անում են մշտական զօրք պահպանելով։

Այդ բարի ցանկութիւնները մնում են միայն իբրև փափաքներ և տենչանքներ։ Իսկ իրականութիւնը շարունակում է իր հին երգը և ոչ մի պետութիւն չէ թուլացնում և չէ էլ կարող թուլացնել ու կրճատել իր ռազմական ոյժը։ Ոչ ոք ապահով չէ ապագայի վերաբերութեամբ և ոչ ոք չի զարմանայ, եթէ վաղը կամ միւս օրը միջազգային յարաբերութիւնները այնքան սուր կերպարանք ստանան, որ անխուսափելի դառնան պատերազմական գործողութիւնները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵԿՈՅ ՌԱՖԱՅԷԼ ԷՐԻՍԹՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Կիրակի, մարտի 11-ին, վրաց դրամատիկական կոմիտէի նախաձեռնութեամբ, ազնուականների Թատրոնում տեղի ունեցաւ գրականական երեկոյ հանգուցեալ Ռաֆայէլ Էրիսթովի յիշատակին։ Երեկոն սկսվեց ներկայացումով. դերասանները ներկայացրին հանգուցեալի «Հօրեղբօր հետ հանաք» 1 գործողութեամբ ուրախ կոմեդիան, որի մէջ փայլեցին իրանց խաղով տ. Սափարովա-Աբաշիձէն, պ.պ. Աբաշիձէ եւ Կիպիանի, մանաւանդ առաջինը. տիկինը 1 գործողութեան մէջ վեց անգամ շոր է փոխում եւ վեց անձնաւորութիւն է ներկայացնում զարմանալի ճարպիկութեամբ. տարիքը տիկնոջ վրա չէ ազդել։

Երկրորդ բաժանմունքում բանաստեղծ Ակակի Ծերէթելին բեմից խօսք ասաց հանգուցեալ գիւղացի մի ուրիշ երիտասարդի խնդրից ներկայ լինել երէցփոխի հաշուետուութեանը։ Երբ զարմանքս յայտնեցի, թէ մենք ինչացու ենք այդտեղ, քանի որ ոչ հասարակութիւնից ընտրված հաշուետեսներ ենք եւ ոչ էլ «ի վերուստ» նշանակված քննիչներ, քահանան ինձ հանգստացրեց, բացատրելով, որ այժմ այդպէս պիտի կատարվի եկեղեցական փողերի հաշուետուութիւնը, որովհետեւ իրանց այդպէս է «հրամայված»։ Չը գիտեմ որքան ճիշդ էր տէր հօր առարկութիւնը, սակայն երէցփոխը արդէն առաջ էր բերել իր «դաւթարն» ու երեքս էլ «խղճի մտօք» շրջապատեցինք կլոր, ցածուն սեղանը հասարակական այդ լուրջ գործը «անաչառութեամբ» կատարելու։

«Տղայութեանս—10 կոպ., պսակէ—40 կ., մոմավաճառութենէ—2 ռուբլի 30 կոպէկ...» եւ այլն, ամբողջ տարվայ եկամուտը... 36 ռուբլի։ Տէր հայրը մէկիկ մէկիկ արձանագրում էր իւրաքանչիւր ամսվայ մուտքն ու ելքը, որպէս զի ժապաւինեալ մատեան անցկացնելով՝ ուղարկէր բատ պատկանելոյն։ Բայց երբ հերթն եկաւ դաւթարի այն տողերին, ուր երէցփոխը պարզութեամբ, միւս ծախքերի պէս առանց խարդախելու, յականէ անուանէ գրել էր «գործակալ հայր Քաջաղունունն աշխամբոյր—3 մնթ.,» հաշուետես հայր քարտուղարը կանգ առաւ ու չարձանագրեց այդ կէտը։

—«Գիտես, Պետրոս, բացատրեց նա, 4 մարդի» համար գցել, բայց այդ փողերը պէտք է ուրիշ ծախքի անունով արձանագրվեն, յիշում ես գործակալ հայրն էլ այդպէս պատուիրեց»։

—«Ցիշում եմ, պատասխանեց երէցփոխ Պետրոսն ու մանրամասն պատմեց, թէ ինչպէս երբ գործակալ հայրն եկել էր «հոգեբաժիններ» հաւաքելու, երկար սակարկելուց յետոյ երեք ռուբլի «աշխամբոյր» վերցրեց եւ երբ ինքը (երէցփոխը) յայտնեց նրան, թէ չէ՞ որ հոգեւոր կառավարութիւնն արգելել է երէցփոխներին եկեղեցական փողերից ում եւ լինի աշխամբոյր տալը, հայր գործակալը բացատրեց, որ այդ այդպէս է, բայց մի եւ նոյն ժամանակ իրան պատուիրված է (ի հարկէ ոչ պաշտօնապէս կը լինի) ամեն կերպ աշխատել չը վերջացնել այդ «հնաւանդ» սովորութիւնը ժողովրդի միջից։ Ուստի թէեւ ամենքին յայտնի է, որ ինքը «կարօտ չէ» այդ կոպէկներին, բայց «ի հարկէ ստիպեալ» վերցնում է։ Իսկ «տարեկան ծանօթութիւնների» 4 ռուբլին եկեղեցական մատեանների գրելու վարձն է, որ բոլոր գիւղերում գրում են քահանաները, իսկ վարձը չորս-չորս ռուբլի ստանում է հայր գործակալը եկեղեցական փողերից ու երէցփոխի մատեանի մէջ «աշխամբոյրների» հետ գրվում է «ուրիշ ծախքի» անունով։

Հաշիւը վերջացաւ, բայց երբ հարցրի երէցփոխից, թէ մի՞թէ դա է եկեղեցու ամբողջ կարողութիւնը, նա պատասխանեց, որ համարեա թէ այդ է, որովհետեւ թէեւ կան մօտ 2000 ռուբլուց աւելի եկեղեցական փողերի մուրհակներ, բայց տարիների ընթացքում անցնելով զանազան «բարեխիղճ» երէցփոխների ձեռքով, նրանց անձնական մուրհակների հետ այնքան են «կերպարանափոխվել», որ այժմեան մուրհակները գրեթէ բոլորն էլ լոկ այնպիսի մարդկանց անունով են, որոնք աւելի չուտ իրաւունք ունեն իրանց օրական ապրուստի համար եկեղեցուց մի բան պահանջել, քան եկեղեցին նրանցից։ Շատերի էլ օրինական ժամանակամիջոցն անցել է արդէն (10 տարի), բայց հոգեւոր իշխանութիւնն իր դիմումներին պատասխանում է, թէ թող գործակալը մի կերպ «եօլա» տանի, բայց վերջինս էլ «հէչ տէրը չիլի»։

Տարեկան 36 ռուբլի եկամուտի համար երկու օրինակ մատեան է գրվում, պաշտօնապէս քննիչ նշանակվում, հաշիւներ տեսնվում եւ... էլի 7 ռուբլի անհետանում է. պարզ է թէ առանց հաշուի, առանց «դաւթարի» «եօլա» գնացող 2000 ռուբլու դրութիւնն ինչ կը լինի։ Ահա թէ ում համար է ասված «զմժղուկս քամէք եւ զուղտս կլանէք»...

Ապրեն բարոյականութեան Մեծ Քարոզչի «պղտի» աշակերտները։ Գողութեան դէպքեր շատ էի լսել, նոյն իսկ ինքս ենթարկվել էի Ալէյ բէկի պէս յայտնի աւազակի յարձակման, սակայն անբնակ դաշտի միջին, այն էլ մութ գիշերով, իսկ մեր արժանապատիւ հայրերը խոտով, գարիով, հարկաւ ոչ բռնութեամբ, բայց չէ՞ որ եթէ գիւղացիներից մէկը ընդդիմանայ, վայը նրան տարած կը լինի, չէ՞ որ նրա կալը չի չափվի։ Նոյն բանն է լինում բամբակի բերքի վերաբերմամբ։ Գիւղերից մի քանիսում, ըստ հին սովորութեան, կապալառուն եւ գիւղացիները պիտի ընտրեն իւրաքանչիւր կողմից երկերկու մարդ, որպէս զի նրանք, համաձայն իրանց բարեհայեցողութեան, նշանակեն, թէ որ արտը որքան բամբակ կարող է տալ. այդ բարի մարդիկ մի ամենաչնչին բանով կաշառվելով կապալառուից, անխիղճ են գտնվում, աւելի բամբակ են վճռում տալ կապալառուին. եւ նրանց վճիռը անդառնալի վճիռ է, պէտք է տալ, բողոքել ոչ ոք չի համարձակվի. ժողովուրդը այնքան տգէտ է, որ կարծում է թէ կապալառուները կառավարութեան ընտրեալներն են։

Մօտիկ անցեալներում պատահեց մի հազուադէպ գործ. մեզանից ոչ հեռու Խոշխաբար հայ գիւղում գիւղացիների եւ կապալառուի կողմից նշանակված մարդիկ վճռում են, թէ որքան պիտի տալ կապալառուին բամբակ. գիւղացիները տեսնելով, որ շատ անիրաւաբար են վճռել մուլք տալ, մի քանի մարդով սիրտ են անում դիմելու հաշտարար միջնորդին, որից եւ ստանում են հրաման կրկին գնալ եւ կարել մուլքը բարեխղճօրէն. այդպէս եւս կատարվում է հրամանը, բայց եւ այնպէս այն բամբակներից, որոնցից երկրորդ վճռի համեմատ պիտի ստացվէր 1 պուդ, փոխանակ 2 պուդի, կրկին պահանջվում է 2 պուդ ըստ նախկին վճռի. գիւղացիները կրկին դիմում են հաշտարար միջնորդին, բայց իզուր. ոչինչ չեն շահվում, որովհետեւ կապալառուի տեսակում այնպէս էր նշանակված...

Սակայն այս խաղերը հնացած պիտի համարել. սա դեռ չարիքի փոքրագոյնն է. մուլք ստանալու այս սիստեմը վերացած է շատ գիւղերում, պէտք է արձանագրել նոր օրինակներից։ Եւ ահա երկրորդ սիստեմը մուլք ստանալու։ Առաջ, բամբակը հանելուց եւ ժողովելուց յետոյ, մուլքադարը իւրաքանչիւր գիւղացուց հրաւէր ստանալով պարտաւոր էր գնալ նրա տունը եւ չափելով ստանար իր մասը, դիցուք 11%, եւ այսպէս՝ մինչեւ վերջանար ամբողջ գիւղի բամբակների չափելը. սա լաւ եւ ձեռնտու պայման էր ժողովրդի համար, բայց այս սիստեմը մուլքադարին դուր չեկաւ, որովհետեւ նա ժամանակ չունէր մնալու միշտ գիւղում եւ պարապելու, այլ թողնում էր մինչ ամբողջ գիւղը կը վերջացնէր, տուն կը բերէր բամբակը, եւ ապա իր տունը գնալ չափելու։ Դրանից ինչ ասել կամենամ, դուք կարդացեք հետեւեալ գլուխը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱՑՈՒ ՑԱՒԵՐԻՑ

(Պատկեր Ախալքալաքի գաւառի կեանքից)

II

Շատ անգամ ինձ պատահել էր «Մշակի» մէջ կարդալ մեր եկեղեցական փողերի գիտութեամբ եւ անգիտութեամբ «ի վերին Երուսաղէմ» համբառնալու մասին, բայց ճիշդն ասած մինչեւ այժմ դեռ անձամբ չէի ստուգած այդպիսի մի դէպք։ Սակայն մօտ օրերս այդ «բաղդին» էլ արժանացայ, որի համար պարտք եմ համարում շնորհակալութիւնս յայտնել Գանձայ գիւղի Արիստակէս քահանայ Դիւրկէրեանցին։

Մի կիրակի օր յիշեալ գիւղի երէցփոխը, որ բաւական զարգացած մի երիտասարդ է, հրաւիրել էր «կնունքի» հաց ուտելու։ Էհ, իմ էլ ջանիս «մինաթ», մտածեցի, որ գնալը մերժելուց շատ ձեռնտու է, համ փորս կը կշտանայ հազիր, համ էլ գիւղացու ցաւով հետաքրքրվողն ուր պիտի գնայ, եթէ ոչ հէնց գիւղացիների մէջ։ Երբ «հացը» վերջացրել ու փորերս տոգած միւս գիւղացիների հետ տանտիրոջը շնորհակալութիւն յայտնելով պատրաստվում էինք դուրս գալ, քահանան ինձ ու նէթ էլ պէտք է «տարեկան ծանօթութիւնների» համար գցել, բայց այդ փողերը պէտք է ուրիշ ծախքի անունով արձանագրվեն, յիշում ես գործակալ հայրն էլ այդպէս պատուիրեց»։

—«Ցիշում եմ, պատասխանեց երէցփոխ Պետրոսն ու մանրամասն պատմեց, թէ ինչպէս երբ գործակալ հայրն եկել էր «հոգեբաժիններ» հաւաքելու, երկար սակարկելուց յետոյ երեք ռուբլի «աշխամբոյր» վերցրեց եւ երբ ինքը (երէցփոխը) յայտնեց նրան, թէ չէ՞ որ հոգեւոր կառավարութիւնն արգելել է երէցփոխներին եկեղեցական փողերից ում եւ լինի աշխամբոյր տալը, հայր գործակալը բացատրեց, որ այդ այդպէս է, բայց մի եւ նոյն ժամանակ իրան պատուիրված է (ի հարկէ ոչ պաշտօնապէս կը լինի) ամեն կերպ աշխատել չը վերջացնել այդ «հնաւանդ» սովորութիւնը ժողովրդի միջից։ Ուստի թէեւ ամենքին յայտնի է, որ ինքը «կարօտ չէ» այդ կոպէկներին, բայց «ի հարկէ ստիպեալ» վերցնում է։ Իսկ «տարեկան ծանօթութիւնների» 4 ռուբլին եկեղեցական մատեանների գրելու վարձն է, որ բոլոր գիւղերում գրում են քահանաները, իսկ վարձը չորս-չորս ռուբլի ստանում է հայր գործակալը եկեղեցական փողերից ու երէցփոխի մատեանի մէջ «աշխամբոյրների» հետ գրվում է «ուրիշ ծախքի» անունով։

Հաշիւը վերջացաւ, բայց երբ հարցրի երէցփոխից, թէ մի՞թէ դա է եկեղեցու ամբողջ կարողութիւնը, նա պատասխանեց, որ համարեա թէ այդ է, որովհետեւ թէեւ կան մօտ 2000 ռուբլուց աւելի եկեղեցական փողերի մուրհակներ, բայց տարիների ընթացքում անցնելով զանազան «բարեխիղճ» երէցփոխների ձեռքով, նրանց անձնական մուրհակների հետ այնքան են «կերպարանափոխվել», որ այժմեան մուրհակները գրեթէ բոլորն էլ լոկ այնպիսի մարդկանց անունով են, որոնք աւելի չուտ իրաւունք ունեն իրանց օրական ապրուստի համար եկեղեցուց մի բան պահանջել, քան եկեղեցին նրանցից։ Շատերի էլ օրինական ժամանակամիջոցն անցել է արդէն (10 տարի), բայց հոգեւոր իշխանութիւնն իր դիմումներին պատասխանում է, թէ թող գործակալը մի կերպ «եօլա» տանի, բայց վերջինս էլ «հէչ տէրը չիլի»։

Տարեկան 36 ռուբլի եկամուտի համար երկու օրինակ մատեան է գրվում, պաշտօնապէս քննիչ նշանակվում, հաշիւներ տեսնվում եւ... էլի 7 ռուբլի անհետանում է. պարզ է թէ առանց հաշուի, առանց «դաւթարի» «եօլա» գնացող 2000 ռուբլու դրութիւնն ինչ կը լինի։ Ահա թէ ում համար է ասված «զմժղուկս քամէք եւ զուղտս կլանէք»...

Ապրեն բարոյականութեան Մեծ Քարոզչի «պղտի» աշակերտները։ Գողութեան դէպքեր շատ էի լսել, նոյն իսկ ինքս ենթարկվել էի Ալէյ բէկի պէս յայտնի աւազակի յարձակման, սակայն անբնակ դաշտի միջին, այն էլ մութ գիշերով, իսկ մեր արժանապատիւ հայրերը

ման ցանկացած օրը կը յայտնվէր, թէկուզ այդ օրը յունվար ամսին լինէր, թող ժողովուրդը դիմէր զանազան վաչխառուների (ինչպէս մինչեւ օրս չարունակվում է) եւ տէրունական հարկի եւ իր պիտոյքի համար փող վերցնէր, չնչին գներով տալով իր ապրանքը. թող սկզբնական հոկտեմբերեան գները բամբակի իջնէին մինչեւ ուր կուզէին, մուլքադարի հոգսը չէ, նա դեռ գործեր ունի կատարել վերջացնելու, երբ կը վերջացնէ, ապա կարող է գալ այս փոքրիկ գործով զբաղվելու։

Մուլք վերցնելու երրորդ սիստեմն էր մաքուր բամբակ վերցնել,—այն է բամբակ մաքրող մեքենայի վրա, որտեղ կը մաքրէին գիւղացիները,—առանց բամբակի սերմ վերցնելու. սակայն այդ սիստեմը դուր չեկաւ կապալառուներին. այժմ իրաքանչիւր կապալառու իր վերցրած գիւղում գնում է մի հատ բամբակ մաքրող մեքենայ (ձիով քանեցնվող) եւ ստիպում է բոլոր գիւղացիներին բամբակը վաճառել իրան, ինչ գնով ինքը կը բարեհաճէ գնել. տալ իրան՝ բամբակ մաքրելու համար 5%, իրան հասանելի մուլքը տալ մաքուր բամբակից, եւ բացի այդ՝ տալ եւ բամբակի սերմից իրան կապալառուին այնքան, որքան հասանելի էր չը մաքրած ժամանակ. այն ինչ սերմից մուլք վերցնելը նոր, իրանց ստեղծած օրէնքն է, որովհետեւ մինչեւ օրս, եթէ մաքուր բամբակ էր ստանում մուլքատէրը, այն ժամանակ սերմից իրաւունք չունէր մուլք վերցնելու (ինչպէս քանի տարի առաջ վերացվեց եւ սաման փուլին (դարմանավարձ) իբրեւ ցորենը ծեծելու վարձ։

Որ կապալառուներին դէմ դնել եւ նրանց կամայականութիւններին սահման դնել անկարելի է, ահա մի այլ լաւ օրինակ։ Իգդիրում այժմ գտնվում է մի հատ կերոսինով բանող մեքենայ, որը բանեցնում է մի ալիւրաղաց եւ մի հատ բամբակ մաքրող մեքենայ. բամբակ մաքրող մեքենայից որոշված է դրսի գիւղացիների համար վերցնել մաքրելու վարձ միմիայն 1¾%, որի հետ եթէ հաշվելու լինենք ¼% եւս բերել տանելու վարձ, գիւղացու համար կարժենայ միայն 2%, փոխանակ 5%-ի, որը վճարում է կապալառուին կամ մի ուրիշին։ Խեղճ գիւղացին անչափ ուրախ էր, որ յայտնվեց իրանց շահերին ծառայող մի այսպիսի մեքենայ, որը բամբակը եւ իր սերմը միմեանցից հանում է շատ մաքուր եւ արագ. բայց ինչ արած, կապալառուների կամայականութեան չեն կարողանում դիմադրել. խեղճ գիւղացին ստիպված վճարում է նրան մի պուդ բամբակը 10 ր., փոխանակ 10 ր. 50 կոպ. (գոյութիւն ունեցող գինը) եւ մաքրելով նրա մեքենայով վճարում է 5% փոխանակ 2%։ Բացի այս ամենը, բամբակն էլ այնպէս փչացնում է եւ կիսով չափ սերմի հետ տալիս, որ գիւղացին եթէ կրկին քաշելու լինի նոր մեքենայի (двигатель) վրա, բաւական բամբակ կը ստանայ։ Այս բոլորը տալուց, այսինքն պուդին 40—50 կոպ. պակաս վաճառելուց, եւ այնքան զոհողութիւններ անելուց յետոյ, գիւղացին իր օձիքը նրանից դարձեալ չէ կարողանում ազատել. գալիս է կշիռը, Աստուած կշիռ համարէ, թէ կապալառուն իւրաքանչիւր կշռումը որքան ծանր պիտի ստանայ, դումարից որքան պակաս պիտի տայ։

Բ. Մ.-Առաքելեան

Իգդիր

«ՌՈՃԿԻ» ՀԱՐՑԸ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ

(Նամակ Խմբագրութեան)

Երեւանցիները մերժեցին քահանայական ռոճիկը՝ քահանաներին անարժան համարելով այդ մարդավայել դիրքին, իսկ աստրախանցիները մերժեցին միմիայն կոպիտ «չենք ուզում»-ով, չը բացատրելով թէ ինչ պատճառով չեն ուզում։

Սեդրակեան արքեպիսկոպոսը ժողովի սկզբում բացատրեց հարցի կարեւորութիւնը եւ ասեց, որ մի քանի քաղաքներում, որոնցից երեքը հէնց իր թեմում, ընդունել են այդ ձեւը,— եւ երեւի տեղեակ լինելով ժողովականների տրամադրութեանը՝ հարցը դրեց այսպէս. «եթէ հասասնացած կամ նպատակայարմար էք գրտնում այդ հարցը, ուրեմն ընդունեցէք եւ այնուհետեւ կը մտածենք գործադրութեան եղանակի մասին, իսկ եթէ անժամանակ էք համարում, մի ընդունէք»։ Սկսվում են մանր խոսակցութիւններ. մէկը ուզում է բացատրել հարցի կարեւորութիւնը, յանկարծ մի ուրիշը կտրում է խօսքը, իսկ մի ծերունի, քաջալերվելով դրանից՝ ինքն է սկսում խօսել եւ առաջին խօսողի ձայնը խեղդում։ Ծերունուն խնդրում են բարձր խօսել, որ իմանան թէ ինչ է ուզում ասել, մինչեւ անգամ հրաւիրում են առաջ գալ։ Գալիս է, համբուրում է սրբազանի աջը, յետոյ սկսում է ինչ որ բան փսփսալ. խնդրում են բարձր ասել, սկսում է բարձր խօսել եւ բարկանալով դիմում է առաջին խօսողին, նրան, որն ուզեց բացատրել հարցի կարեւորութիւնը եւ կիսատ մնաց— ժամաւորապէս հետեւեալ խօսքերով. «ինչ ես խօսում, ինչ ես դուրս տալիս»։

Ժողովականների մի մասը սկսում է հրոհոալ եւ լսվում են ձայներ՝ «հարկաւոր չէ»։ Ոչ ոք չը համարձակվեց խօսել, որովհետեւ տեսնում էին, որ հասկանալու տրամադրութիւն չէ ցոյց տալիս ժողովը։ Այնուհետեւ աղմուկը աւելի սաստկացաւ եւ չորս կողմից սկսեցին աղաղակել՝ «չենք ուզում, չենք ուզում», իսկ եւ իսկ նման «ի խաչ, ի խաչ»-ին։ Ինչպէս տեսնում էք, աստրախանցիները դեղեցիկ բան են համարում, երբ քահանան մի ձեռքով բուրվառ գցելով՝ միւս ձեռքը բաց է անում, որ նրան «ողորմութիւն» տան...

Անշուշտ շատերը չը գիտեն,—որովհետեւ ոչ մի տեղ այս տգեղ սովորութիւնը չը կայ,—որ այստեղ քահանան, թէ զգեստաւորված եւ թէ փիլօնով՝ երբ գանձանակ է ման գալիս, չունի ձեռքում տուփ, այլ փիլօնի տակից իր ափն է պարզում, որ գանձանակը դնեն նրա ափի մէջ... Հետաքրքիր է, ո՞վ է հնարել այդ զզուելի ձեւը, քահանաները թէ ժողովուրդը։ Ես կարծում եմ, թէ քահանաները, այն յոյսով, որ տուողը կամաչէ սեւ փողով քահանայի մաքուր ձեռքն աղտոտել, կը տայ արծաթ փող...

Ասում են, որ այդ մերժման հարցում մեծ դեր է խաղում «խոյեցի» բառը։ Բուն աստրախանցին բոլոր օտարաքաղաքացիներին անխտիր «խոյեցի» է անուանում, արհամարհական եւ ծաղրելի գոյն տալով նրան, եւ որովհետեւ քահանաների մէջ էլ կան «խոյեցիներ», ուրեմն հարցը լմնցաւ։ Երբ տգէտ մուժիկը մեզ արհամարհական մականուն է տալիս, մենք նեղանում ենք... Ինչ իրաւունքով են նեղանում աստրախանցիները, քանի որ իրանք իրանց արիւնակիցներին նոյնանման մականուններ են տալիս։

Մէկ մեծ սխալ պատահեց այդ ժողովում. ինչպէս կարելի է բզաւոցով մի հարց վճռել, չէ՞ որ ամենքը չէին դոռում «չենք ուզում», այլ ծխականների աւելի տգէտ մասը, չէ՞ որ մի մարդը կարող է առնուազը երեք անգամ դոռալ միմեանց ետեւից «չենք ուզում» եւ եթէ ընդունենք տգէտների թիւը երեսուն, այն ժամանակ կը ստացվի իննսուն դոռդոռոց «չենք ուզում», այն ինչ մեծ մասը լուռ էր։ Ինչպէս երեւում է, սխալ էին հասկացրել սըրբազանին ծխականների վատ տրամադրութեան մասին եւ նա համաձայնվեց այդ ձեւի հետ, մտածելով անշուշտ թէ այսպէս կամ այնպէս մի եւ նոյնն է, հարցը չէ անցնելու։ Ես հաւոզված եմ, ընդհակառակը, որ եթէ ձայները թերթիկներով հաւաքէին՝ հարցը չէր տապալվի։

Իմ կարծիքով, այդ ժողովը անվաւեր պէտք է համարել անկանոն ձայնաւորութեան պատճառով. ես պնդում եմ, որ եթէ թերթիկներով լինէր, ժողովը չէր մերժի հարցը. ես պնդում եմ, որ մեծամասնութիւնը լռեց՝ տեսնելով քսան-երեսուն մարդու անվայել գոռդոռոցը։

***

ՆԱՄԱԿ ՄՕԶԴՕԿԻՑ

Մարտի 8-ին

Մարտի 2-ին, երեկոյեան 5 ժամին, տեղաջի փոխ-գնդապետ Արաեմ Իվանիչ Խոսրովեանը, նստած իր տան առաջ, նայում էր փողոցում զբօսնող ուրախ բազմութեան վրա։ Անսպասելի կերպով այդտեղ յայտնվում է Գէորգ Նազարեան անունով մի անձն եւ զբօսնող մեծ բազմութեան ներկայութեամբ չորս անգամ արձակում է ատրճանակից դէպի վերոյիշեալ փոխ-գնդապետը, որից վայր է ընկնում փոխ-գնդապետը։ Մարդասպանութիւն գործելուց յետոյ, Գ. Նազարեան շատ հանգիստ կերպով ատրճանակը գրպանն է դնում ու շարունակում դանդաղ քայլերով առաջ գնալ, կարծէք ոչինչ պատահած չը լինէր։ Զբօսնող բազմութիւնից վիրաւորված փոխ-գնդապետին ոմանք օգնութեան են հասնում եւ բարձրացնելով տանում իր սենեակը։ Փոխ-գնդապետը 14 ժամ չարաչար կերպով տանջվելուց յետոյ, միւս օրը, այն է մարտի 3-ին, փչեց իր հոգին 73 տարեկան հասակում։ Կիրակի օրը, ամսի 4-ին, թէ հայ եւ թէ օտար բազմութեան ներկայութեամբ կատարվեց հանգուցեալի թաղման հանդէսը։

Մարդասպանն արդէն կալանաւորված է եւ այժմ հիւանդ լինելով՝ գտնվում է հիւանդանոցի կալանաւորների բաժնում։ Գործն արդէն յանձնված է քննութեան։

Սպանութեան պատճառն եղել է փողը։ Սպանող Գէորգ Նազարեանը պարտք է եղել 1000 ռուբլի փոխ-գնդապետ Խոսրովեանին, որը վերջերս աճուրդով ծախել է տուել Նազարեանի 44 սաժէն փայտը։ Ահա այդ բանի համար ուզեցել է Նազարեանը վրէժ առնել նրանից եւ ամբողջ մէկ շաբաթ հետեւել է Խոսրովեանի ամեն մի քայլին՝ փնտրելով յարմար միջոց նրան սպանելու համար։

Այժմ աւելորդ չէր լինի մի քանի տող եւս գրել հանգուցեալի մասին։ Արմաւիրի, Եկատերինօդարի եւ իր շրջակայքի չերքէզներին մկրտող եւ քրիստոնէութիւն ընդունել տուող հանգուցեալ Յովհաննէս աւագ քահանայ Խոսրովեանի որդի փոխ-գնդապետ Խոսրովեանը ծնվել է 1828 թուի մարտի 8-ին։ Սկզբնական ուսումն ստացել է Ստաւրոպոլ քաղաքի գիմնազիայում, որից յետոյ մտել է զինուորական ծառայութիւն։ Նախ ծառայել է Ռուսաստանում եւ ապա Ստաւրոպոլ, Մոզդոկ, Խանքեանդի (Շուշի քաղաքի մօտ), Խիվա, մասնակցել է Շամիլի պատերազմին, նոյնպէս եւ Կարսի պատերազմին, որի համար ստացել է շատ շքանշաններ, ի միջի այլոց ս. Գէորգի ու Վլադիմիրի խաչերը։ Հանգուցեալը յայտնի էր իր բարեգործութեամբ։ Մոզդոկում շատ շատերին օգնել է թէ դրամով եւ թէ խորհուրդներով, այնպէս որ Մոզդոկում չը կայ մէկը, որին լաւութիւն արած չը լինի նա։ Մեծ տոն չէր անցնի, որ հանգուցեալը քաղաքիս աղքատներին չը բաժանէր կամ կերակուր, կամ ալիւր, փայտ եւ կամ փող։ Ահա նրա ժահով շատ աղքատ ընտանիքներ՝ նոյն իսկ հարուստներ՝ պիտի կարօտութիւն զգան նրա օգնութեան։

Ակ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 7-ին բացվեցին գիւղատնտեսական խորհրդի նիստերը՝ նախագահութեամբ երկրագործութեան մինիստր Երմօլօվի։ Նիստը բաց անելուց յետոյ՝ մինիստրը յայտնեց, որ այն հարցերի մեծ մասը, որոնք քննված են նախկին խորհրդակցութիւնների ժամանակ, արդէն լուծված են օրէնսդրական կարգով, ինչպէս, օրինակ, գիւղատնտեսական բարեքաջմների համար տրվող նուէրների ընդլայնումը, տեղական գիւղատնտեսական խորհուրդների հարցը եւ այլն։ Ինչ վերաբերում է գիւղատնտեսական կրթութեան համար մշակելու ընդհանուր կանոնադրութեան հարցին, մինիստրը յայտնեց, որ կարճ ժամանակից յետոյ նա այդ մասին մի օրինագիծ կը ներկայացնէ պետական խորհրդին։ Ներկայ խորհրդակցութիւնը պէտք է քննէ անբաժան կալուածքրացան, հասկեր բռնեցին, դաշտ ու ձոր կենդանութիւն առան։

Բայց աւաղ... երկինքն անողոք էր, նա գթութիւն չը գիտէր։ Դեռ արցունքոտ էին խեղճ գիւղացու աչքերը, դեռ արիւնոտ էր նրա վէրքն ու թաց հարիւրաւոր հողաբոլորները, երբ երկինքը նոր պատահաս, նոր աղէտ ուղարկեց։ Դաշտ ու ձոր լցվեցին մի տեսակ մոխրագոյն մլուկներով ու խայտաբղետ բզէզներով, որոնք իրանց ոչնչութեամբ հանդերձ ոչընչացրին ամբողջ ազգաբնակութեան դառն աշխատանքը, խեղճ գեղջուկի վերջին յոյսն ու ապաւէնը։ Մի օրվայ մէջ դաշտերը դատարկվեցին, արտերն ամայացան, չորացան...

Քաղց է. բայց ոչ քաղելու բան կայ, ոչ քաղող, բնութիւնն ինքը միանգամից քաղել վերջացրել էր ու գիւղացու «ամբարն» ու «հորը» մկներին ասպարէզ թողել։ Անասունների կեր դարմանն անգամ չը կարողացաւ վերցնել դաշտերից գիւղացին։

Ճչում է մանուկն օրորոցում... «Ապա ջան, անօթի եմ», լացկամած կանչում է միւսը...։ Բայց ինչ անէ խեղճ մայրը, քաղցից ծծերի կաթը ցամաքել է, «հացին սալան» (ման) վեց ամիս է, որ «մանրունք» չէ տեսել, ինչ տայ հեծկլտող մանկիկներին...։ Աղի արցունք կուլ տալով հեռանում է սովի սրտակտուր բեմից ու շեմի վրա նստած իր դառն օրհասը ողբում։

Թող լայ մանուկը, թող ճչայ երեխան, ո՞վ առանց փողի հաց կը տայ նրանց աղքատ հօրը։ Խեղճ չամդուրեցին, վաչեանցին, գիւբիւրդեցին, դելիսկեցին... առաւօտ վաղ, դեռ մութն ու լուսում, տոպրակը շալակին վազում է քաղաք՝ մի բուռ ալիւր բերելու, թշուառ ընտանիքը անգութ սովի ամեհի ճիրաններից փրկելու։ Նա դեռ մինչեւ իրիկուն պիտի աշխատէ, որ երեկոյեան ադամի անէծքով վատակած կօպէկներով մի կտոր հաց բերէ տուն։ Բայց Աստուած մի արասցէ (թէեւ շատ է լինում), եթէ աշխատեցնող չը լինի, եթէ քաղաքում գործ չը լինի, ինչպէս տուն վերադառնայ թշուառ ընտանիքի դժբաղդ հայրը...։ Ո՜հ, որքան անգութ ես երկինք...։

Ծանր տարուբերվում է դատարկ մարագի բարձր երդիկից կախված պարանը։ Մէկը, գիշերվան գողի պէս գաղտուկ չորս կողմը նայելով, շրջում է տան չորս բոլորը։ Լայն ճակատի խոշոր կնճիռներն աւելի խոժոռ տեսք էին տուել նրա մռայլ դէմքին։ Արիւնով լցված, թուխ, ուռած աչքերը հնոցի պէս վառվում էին նեղ ընների մէջ ու կարծես ուզում էին դուրս թռչել իրանց կաչկանդող բանտից։ Խորհրդաւոր մենաւորը մի անգամ էլ չրջեց դուռ-երդիկը ու ձեռքի մի յուսահատական շարժումով, կարծես վանելով մտքի վարանմունքը, խելագարի պէս ներս ընկաւ մարագը։ Մի քանի րօպէից կանացի մի սրտակտուր ճիչ ու աղաղակ մարագը լցրեց մարդկանցով, որ հազիւ կարողացան ցած բերել պարանի վրա տարուբերվող ու թոյլ կընոջ բազուկներում նուաղած գիւմբիւրտեցի Ղուլայենց Ղազարի կիսախեղդ մարմինը։ Թշուառ գիւղացին, էլ չը կարողանալով տանել սիրասուն բալիկների, քաղցած մանրուխոչորի լացը ու հեծկլտանքը, փրկութեան միակ միջոց մարագի պարանն էր գտել։

(Կը շարունակվի)

ամբողջ մի հասարակութեան պատկանող 36 ռուբլուց գողանում են 7 ռուբլի գիւղի մէջ, օր ցերեկով, այն էլ հրաւիրված հաշուեհանների ներկայութեամբ...։ Տեսա՞ք քաջագործութիւնը։ Ահա թէ մեր հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչները, որ ժողովրդի մէջ երեւում են պոչով ատղի պէս ու այն էլ միայն ինքուլգենցիաներ ծախելու (հոգեբաժին հաւաքելու), փող գցելու համար, ինչ բարոյական դասեր են տալիս խեղճ, միամիտ գիւղացուն։

Հարկաւ գիւղական պարզամիտ ու ակնածող երէցփոխի աչքերը ջուխտ պիտի բացվեն ու պիտի մտածէ, որ եթէ կարելի է հայր գործակալին 7 ռուբլի բաժին հանել եկեղեցական փողերից եւ ուրիշ ծախքի անունով հաշիւ տալ, ինչու չանել նոյնը իր սեփական գրպանի օգտին... Վաղուց մենք համոզված էինք, որ, ժողովրդի ասածի պէս, «ձուկը գլխից կը հոտի» ու այդ հոտելու վիճակ(?)ն է հասած արդէն խեղճ հայի գլուխ համարվող հոգեւոր իշխանութիւնը, բայց չէինք սպասում Գանձակի քահանաներից, որ զարգացումով ու կրթութեամբ իրանց իշխանաւորներից շատ շատերից բարձր են, կուլ կը տային այդ «թթու թանը»։ Եւ երեւի այնքան ազնիւ կը լինեն Արիստակէս քահանան եւ պ. երէցփոխը, որ կը պարզեն, թէ մատեանի ո՞ր տողի (ծախսի) մէջ «խոթեցին» այդ չարաբաստիկ 7 ռուբլին։

—

Է՜հ, գրողը տանի գիւղի կեանքը գրողին էլ, քրքրողին էլ. չորս կողմդ միայն ցաւ ու դարդ, դարդ ու լաց...։ Ո՜չ մի ուրախալի երեւոյթ, ո՜չ մի ուրախ վայրկեան, որ մարդ գէթ մի անգամ մի ուրախ լուր տայ գիւղից ընթերցողին։ Լալկան տղայի պէս ստիպված ենք միշտ լալ ու ողբալ։ Բայց Ախալքալաքի թղթակցին, լրատուին կարծես սովորական ցաւերը, աղէտները քիչ նիւթ էին տալիս ողբալու, լալու, երկնքի պատուհաս էլ մի կողմից է ձեռք առել այս դժբաղդ «Սոդոմի» գաւառը։

Դարեգլխի ձմեռն էր, ցուրտ ու ձիւնոտ ձմեռ։ Խեղճ գիւղացին հազիւ ինքն իրան մի կերպ ժողովել, ձագ ու ճիւ հաւաքել, մտել էր բունը, երբ յանկարծ բնութեան բօպէական ահռելի խաղը նրա բունն էլ, բնակարանն էլ կենդանի մեռելների սեւ գերեզմանոց դարձրեց, ուր խելակորոյս մայրը յուսահատ, մաղերը փետելով, իր բալիկին էր որոնում, որը ու անտէր մանկիկը—հողի տակ մնքացող անուշ «ապային», Ջահէլ-Ջիւան երիտասարդն իր կրակ խորով եարին, Ջան ու Ջիգեարին... Բայց ո՞ւր պիտի գտնէին, ահռելի աղէտը վիշապի պէս կուլ էր տուել ամենին ու տանեակ գիւղեր, կենդանի բնակավայրեր մահագոյժ որջերի վերածել։ Ցիրաւի, բարի մարդիկ ձեռք մեկնեցին ընկածին, լացողի արցունքն ամոքեցին... բայց ինչ պիտի լինէր ծովում մի կաթիլ ջուրը...։

Ձմեռն անցաւ, գարուն ելանք։ Անտուն, անտէր գիւղացին ջանք ու ճիգ արեց մոռանալ տխուր անցեալն ու նետվեց դէպի իր սիրելի դաշտը, իր քրտինքով ոռոգված արտը։ Հերկեց, ցանեց, արիւն քրտինք թափեց իր մերկ-անօթի բալիկներին մի կտոր չոր հաց ճարելու յուսով։ Մի րօպէ կարծես Ախալքալաքի ժուլթ երկինքը պարզվեց ու դժգոյն արեւ ժպտաց խեղճ գեղջուկի երեսին։ Օրը տաքացաւ, արտերը բարձրացան, հասկեր բռնեցին, դաշտ ու ձոր կենդանութիւն առան։

Բայց աւաղ... երկինքն անողոք էր, նա գթութիւն չը գիտէր։ Դեռ արցունքոտ էին խեղճ գիւղացու աչքերը, դեռ արիւնոտ էր նրա վէրքն ու թաց հարիւրաւոր հողաբոլորները, երբ երկինքը նոր պատուհաս, նոր աղէտ ուղարկեց։ Դաշտ ու ձոր լցվեցին մի տեսակ մոխրագոյն մլուկներով ու խայտաբղետ բզէզներով, որոնք իրանց ոչնչութեամբ հանդերձ ոչընչացրին ամբողջ ազգաբնակութեան դառն աշխատանքը, խեղճ գեղջուկի վերջին յոյսն ու ապաւէնը։ Մի օրվայ մէջ դաշտերը դատարկվեցին, արտերն ամայացան, չորացան...

Քաղց է. բայց ոչ քաղելու բան կայ, ոչ քաղող, բնութիւնն ինքը միանգամից քաղել վերջացրել էր ու գիւղացու «ամբարն» ու «հորը» մկներին ասպարէզ թողել։ Անասունների կեր դարմանն անգամ չը կարողացաւ վերցնել դաշտերից գիւղացին։

Ճչում է մանուկն օրորոցում... «Ապա ջան, անօթի եմ», լացկամած կանչում է միւսը...։ Բայց ինչ անէ խեղճ մայրը, քաղցից ծծերի կաթը ցամաքել է, «հացին սալան» (ման) վեց ամիս է, որ «մանրունք» չէ տեսել, ինչ տայ հեծկլտող մանկիկներին...։ Աղի արցունք կուլ տալով հեռանում է սովի սրտակտուր բեմից ու շեմի վրա նստած իր դառն օրհասը ողբում։

Թող լայ մանուկը, թող ճչայ երեխան, ո՞վ առանց փողի հաց կը տայ նրանց աղքատ հօրը։ Խեղճ չամդուրեցին, վաչեանցին, գիւբիւրդեցին, դելիսկեցին... առաւօտ վաղ, դեռ մութն ու լուսում, տոպրակը շալակին վազում է քաղաք՝ մի բուռ ալիւր բերելու, թշուառ ընտանիքը անգութ սովի ամեհի ճիրաններից փրկելու։ Նա դեռ մինչեւ իրիկուն պիտի աշխատէ, որ երեկոյեան ադամի անէծքով վատակած կօպէկներով մի կտոր հաց բերէ տուն։ Բայց Աստուած մի արասցէ (թէեւ շատ է լինում), եթէ աշխատեցնող չը լինի, եթէ քաղաքում գործ չը լինի, ինչպէս տուն վերադառնայ թշուառ ընտանիքի դժբաղդ հայրը...։ Ո՜հ, որքան անգութ ես երկինք...։

Ծանր տարուբերվում է դատարկ մարագի բարձր երդիկից կախված պարանը։ Մէկը, գիշերվան գողի պէս գաղտուկ չորս կողմը նայելով, շրջում է տան չորս բոլորը։ Լայն ճակատի խոշոր կնճիռներն աւելի խոժոռ տեսք էին տուել նրա մռայլ դէմքին։ Արիւնով լցված, թուխ, ուռած աչքերը հնոցի պէս վառվում էին նեղ ընների մէջ ու կարծես ուզում էին դուրս թռչել իրանց կաչկանդող բանտից։ Խորհրդաւոր մենաւորը մի անգամ էլ չրջեց դուռ-երդիկը ու ձեռքի մի յուսահատական շարժումով, կարծես վանելով մտքի վարանմունքը, խելագարի պէս ներս ընկաւ մարագը։ Մի քանի րօպէից կանացի մի սրտակտուր ճիչ ու աղաղակ մարագը լցրեց մարդկանցով, որ հազիւ կարողացան ցած բերել պարանի վրա տարուբերվող ու թոյլ կընոջ բազուկներում նուաղած գիւմբիւրտեցի Ղուլայենց Ղազարի կիսախեղդ մարմինը։ Թշուառ գիւղացին, էլ չը կարողանալով տանել սիրասուն բալիկների, քաղցած մանրուխոչորի լացը ու հեծկլտանքը, փրկութեան միակ միջոց մարագի պարանն էր գտել։

(Կը շարունակվի)

ներ հիմնելու, նրանց ժառանգաբար ձեռքից ձեռք անցնելու, լաւագոյն տնտեսութիւններին պարգեւներ տալու, գիւղատնտեսական ցուցահանդէսների համար ընդհանուր կանոնադրութիւն մշակելու եւ հացահատիկների արտահանութիւնը կանոնաւորելու հարցերը։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է յարուցված կազմակերպելու մի կենտրոնական հիմնարկութիւն, որ յանձն առնէր հնութեան յիշատակարաններին վերաբերեալ բոլոր գործերի վարչութիւնը եւ հոգսը՝ պահպանելու այդ հնութիւնները։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը այս տարվայ ընթացքում, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, կը կատարէ մի չարք ջրաբաշխական աշխատանքներ Անդրկովկասում, Սիբիրում եւ Անդրկասպեան երկրում։

—

Սենատը բացատրեց, որ երկաթուղիների բոլոր ծառայողները, վարպետները եւ բանուորները բոլորովին ազատվում են հիւանդանոցի տուրքից։

—

ԿԻԵՎԻՑ մեզ գրում են. «Այս տարի էլ, ուսանողների դիմումով, Կիչինեվի կօնսիստորիան յիշեց, որ անհրաժեշտ է մի խոստովանահայր ուղարկել տեղիս հայ զինուորների համար։ Ցիշեալ կօնսիստորիայի հրամանագրով այստեղ էր եկել Խարկովի Բարգէն վարդապետը, որ երեք օրում կարողացաւ խոստովանել եւ հաղորդել մօտ 700 հայ զինուորի եւ մի քանի հայ ընտանիք։ Այստեղից վարդապետը, զինուորական վարչութեան խնդիրքով, մեկնում է՝ շրջակայքում եղած զինուորներին նոյնպէս հաղորդելու. գնալու է Զերնիգով, Կուրսկ, Սումը եւ Ախտիրկա, որտեղ նոյնպէս կան մօտ 800 հայ զինուորներ։ Արդէն երկրորդ տարին է, որ պատահմամբ է կատարվում այդ կարգը, բայց ցանկալի է, որ կամ կօնսիստորիան եւ կամ աւելի լաւ է՝ էջմիածինը դիմէ տեղիս զինուորական վարչութեան եւ առաջարկէ մի մշտական հովիւ պահել։ Կիեվում, քանի որ շատ ժահվան դէպքեր են պատահում, իսկ թաղող չը կայ։ Մենք համոզված ենք, որ գեներալ Դրագոմիրով կընդունի այդ առաջարկութիւնը եւ պէտք եղած ոճիկը կը նշանակէ»։

—

ԲԱԼԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Գրպանահատութիւնը Բագուի վոկզալում մեծ ծաւալ է ստացել։ Գրպանահատների հմուտ աչքերը բազմութեան միջից ջոկում են իրանց որսը, որ յաճախ լինում է նոյն իսկ «ծխի եւ մրի» մէջ կեանք մտած մի խեղճ բանուոր կամ արհեստաւոր»։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Տեղական «Асхабадъ» թերթի 65-րդ համարից իմանում ենք, որ մի քանի հայ կանայք թոյլտուութիւն են ստացել երկրիս պ. կառավարչից «հայ լուսաւորչական կանանց բարեգործական ընկերութիւն» հիմնելու։ Թերթի ասելով, ընկերութեան» հիմնադրուհին տ. Մամիկոնեանն է։ Մենք պարտք ենք համարում յայտնել, որ այդ ընկերութեան իսկական նախաձեռնողը եղել է տ. Ազնիւը, եւ այդ միտքը արծարծվել է այստեղի կանանց շրջանում։ Մարտի 3-ին կայացած առաջին ժողովում ընկերութեան անդամուհիները եկել են հետեւեալ եզրակացութեան. «ընկերութեան կողմից յայտնել շնորհակալութիւն պ. կառավարչին եւ խնդրել, որ նա ընդունի պատուաւոր անդամի կոչումը. նոյնը խնդրել են մեր նախկին կառավարիչ գեներալ Կուրոպատկինին։ Բացի այդ, ընկերութիւնը որոշել է պատուաւոր հոգաբարձու ընտրել հայոց Կաթողիկոսին»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Երէկ, մարտի 8-ին, Բագուի նահանգական դատարանի այստեղի բաժինը աւարտեց իր 80 գործերի քննութիւնը։ Այսօր դատարանը փակ է»։

—

ՄԱԶՐԱ գիւղից (Սիսիան) մեզ գրում են. «Մեր չէյլօկները բարենորոգումներ մտցրին իրանց մուրհակագրութեան արհեստի մէջ. առաջ գրում էին «վեր առի եւ պարտ եմ տան եւ երկուսով». երբ օրէնքը այդ արգելեց, նրանք, այժմ, եթէ մէկին փող են տալիս 50 ռուբլի, ուղղակի գրում են «մընացի տալի 60 ռուբլի մէկ տարի ժամանակի առանց տոկոսի»։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Արդէն բաւական ժամանակ է, որ մեր եկեղեցում երգում է խմբապետ Ց. Թումանեանցի կազմած երկեռ քառաձայն խումբը։ Սակայն լսում ենք, որ յարգելի պարոնը ուզում է Զատկի տօներից յետոյ անմիջապէս հեռանալ այստեղից։ Ցանկալի էր, որ պ. խմբապետը մի տարի եւս մնար եւ խմբի ընդունակ անդամներից մէկին սովորեցնէր խումբը կառավարելու ձեւը, որով մեր եկեղեցին զուրկ չէր լինի գոնէ կանոնաւոր երգեցողութիւնից»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Այսօր, մարտի 9-ին, Թուրքաց Նօվրուզ Բայրամի պատճառով, այստեղ ձիարշաւ է նշանակված»։

—

ՄԱԶՐԱ գիւղից (Սիսիան) մեզ գրում են. «Անցեալ ամառը մեր կողմերում, սաստիկ անձրեւների պատճառով, գիւղացիները մնացել էին անել գրութեան մէջ. իսկ այս տարի մեզանում համարեա թէ բոլորովին ձիւն չէ եկել, եղանակները բոլորորին գարնանային են, անասունները արդէն գնում են արօտ՝ դաշտերը. սա չը տեսնված բան է Սիսիանի հովիտում տարվան այս ժամանակներում։ Ցորեն ծախվում է մեզանում սօմարը (2 պուդ է) 1 ռ.—1 ռ. 20 կօպ., գարին 60—70 կօպ., բայց գիւղացիք գուշակում են թէ այս տեսակ եղանակների վերջը վատ է լինելու»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Նիշաբուր, փետրվարի 17-ին

Այս տարի Խորասանի կողմերում ձմեռ համարեա չը կար. ձիւն, եթէ չը յիշենք մանաւոր տեղացածը, համարեա թէ այս տարի չը տեսանք. եթէ սարերը սպիտակին չը տային, ձմեռվայ նշան բոլորովին չէր նկատվի. կատարեալ գարուն է, առանց անձրեւի։

Անցեալ տարվայ ձիւնի եւ անձրեւի առատութեան պատճառով, առատ էր եւ ցորենը, որի շնորհիւ էլ արժէքները բաւական իջել էին. օրինակ, ցորենը ծախում էին խալվարը 70—75 ղրան, գարին՝ 35—38 ղրան. բայց այս տարվայ չորային եղանակների պատճառով, դարձեալ սկսել են գնները բարձրանալ, այնպէս որ այժմ ցորենի գինը 100—110 ղրան է, իսկ գարին 60—62 ղրան, եւ այն էլ հազուագիւտ, չը նայած որ Խորասանի առատ եւ պարարտ հողերի պատճառով, պատրաստի ցորենը կարող է ամբողջ 2 տարի, առանց մի որ եւ է կողմից օգնութիւն ստանալու, վար ու ցանքին բաւականութիւն տալ։ Բայց ինչ արած, որ բոլորն էլ աղաների ամբարներումն է, որոնց դռներն այնպէս պինդ են կապել, ինչպէս Աստուած անձրեւի եւ ձիւնի դռներն է փակել, իսկ խեղճ ժողովուրդը, որի մեծամասնութիւնը օտարական ուխտաւոր կամ մշակ է, պիտի աշխատէ դժուարութեամբ հայթայթելու իր օրվայ պարէնը։

Եթէ մինչեւ մարտ ամիսը անձրեւ չը գայ, այն ժամանակ ժողովրդի դրութիւնը շատ կրիտիկական կը լինի. այժմեանից բոլորն էլ սկսել են պատրաստութիւններ տեսնել։ Խորասանի ներկայ նահանգապետը, որն այստեղ ժառանգական դատաւոր է, հրամայել է, որ մի ամբողջ տարի հացթուխներին ցորեն տան իր ամբարներից խալվարը 70 ղրանով, այն պայմանով, որ հացթուխները իրաւունք չունենան հացը 80 ղրանից աւելի ծախելու, հակառակ դէպքում կենթարկվեն տուգանքի։ 4—5 օր է, որ երկինքը ցերեկները ամպում է, իսկ գիշերները ամպերը հեռանում են, թողնելով յետեւից պայծառ երկինք փայլուն աստղերով. յոյս կայ, որ շուտով անձրեւ կը տեղայ։

Այստեղի երիտասարդների մէջ գրադարան-ընթերցարան ունենալու միտք յղացաւ, որն իրականացաւ կատարեալ աջողութեամբ. արդէն մասնաւոր գումար է ուղարկված Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցին եւ պահանջված են մօտ 100 հատոր ընտրված գրքեր. միտքը շատ յարգելի է, քանի որ գործակատարների պարապ ժամերն իզուր չեն անցնի եւ նրանք կունենան մասնաւոր տեղեկութիւններ հայոց գրականութիւնից. միտքը յարգելի է մանաւանդ այն կողմից էլ, որ գրադարանից կարող են օգտվել մօտակայ Սաբզուար, Մաշհադ, Թուրբաթ եւ Ղոչան քաղաքները, որոնց համար Նիշաբուրը կենտրոն է։ Ինչպէս գիտենք, գրադարանի վարչութիւնը դիմել է վերոյիշեալ քաղաքները, ուղարկելով գրադարանի կանոնագրութիւնը, որն անուանված է «Արամետն»։ Արդէն ընտրված են գործող անդամներ։ Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն։

Ահա 25 օր է, ինչ որ այստեղ սկսվել է նոր պղնձէ դրամի գործածութիւնը, բայց քանի որ շատ քիչ էր ուղարկված, ամեն մի մարդու մի հատ հասաւ, որի պատճառով էլ փոխանակ, ինչպէս հրամայված էր, 20-ը մէկ ղրանի ծախելու, ծախվում է 18-ը մէկ ղրանով. մեր կարծիքով, եթէ պարսից կառավարութիւնը ցանկանում է, որ սեւ փողը քիչ լինի, աւելի լաւ կանէր չատացնէր արծաթ փողի 25 կօպ., 50 կօպ. եւ 1 ղրանանոցները, որով բոլորովին սեւ փողի նեղութիւն չէր զգացվի. բայց այժմ, քանի որ բաւարար քանակութեամբ չը կայ ոչ մէկից եւ ոչ միւսից, ուստի ժողովուրդը մեծ պէտք ունի սեւ փողի։

Շնորհիւ փոփոխական եղանակների, այստեղ էլ տարածված էին տարափոխիկ հիւանդութիւններ, որոնց մէջ աչքի էր ընկնում ինֆլուէնցան. 20 օր առաջ ոուն չը կար, ուր հիւանդ չը լինէր ինֆլուէնցայով, սակայն հիւանդութիւնն անցնում էր առանց մահ պատճառելու, շատ քիչ բացառութեամբ։

Իսր. Մէլիք-Իսրայէլեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Զը նայելով անգլիացիների վերջին աջողութիւններին հարաւային Աֆրիկայում, անգլիական զինուորական մինիստրութիւնը անդադար օգնական զօրքեր է ուղարկում դէպի պատերազմական բեմը։ Անցեալ շաբաթ ուղարկվեցին վեց վաշտ եօմէններ, ապա 1500 կամաւորներ, իսկ այժմ Օլդերշոտում հաւաքված են 13,500 հոգի, որոնց թիւը շուտով հասնելու է 15,000-ի։ Այս բոլոր զինուորները մօտ օրերում կուղարկվեն հարաւային Աֆրիկա։

—Բրիտանական դահաժառանգը իր ամուսնու հետ միասին, ինչպէս յայտնի է, ճանապարհ ընկաւ դէպի անգլիական գաղթականութիւնները։ Անգլիական լրագիրները այժմ մի քանի մանրամասնութիւններ են հաղորդում այդ ուղեւորութեան մասին։ Եօրկի դուքսը ամենից առաջ կը գնայ Աւստրալիա, որտեղ կը բանայ աւստրալիական միացեալ գաղութների պարլամէնտը։ Այնտեղից նա կուղեւորվի միւս գաղթականութիւնները։ Թագաժառանգին ճանապարհ գցեցին թագաւորը, թագուհին, արքայական տան միւս անդամները եւ Զեմբերլէն։ Առաջարկելով բաժակ ճանապարհորդների կենացը՝ Էդուարդ VII ասաց. «Այս ուղեւորութեան նպատակներից մէկն էլ այն է, որ ցոյց տվի գաղթականութիւններին, թէ մայր-երկիրը երախտապարտ է նրանց այն օգնութեան համար, որ նրանք ցոյց տուին Անգլիային վերջին պատերազմի ժամանակ»։

—«New-York Herald»-ին հաղորդում են Տեանձինից, թէ ռուսաց եւ անգլիական զօրքերի մէջ տեղի է ունեցել լուրջ ընդհարումն երկաթուղու գծի վրա։ Ամերիկական լրագրի թղթակցի ասելով՝ այդ բանը պատահել է հետեւեալ կերպով։ Տեանձինի անգլիական իշխանութիւնները մշակներ էին ուղարկել երկաթուղու կայարանը՝ յանձնելով նրանց որոշ աշխատանքներ կատարել, բայց ռուսաց զինուորները վռնդեցին նրանց այն պատրուակով, թէ երկաթուղու այդ մասը ռուսական հսկողութեան տակ է։ Մշակները գնացին, բայց շուտով վերադարձան բրիտանական զինուորների հետ միասին։ Այն ժամանակ ռուսները պատերազմական դիրք բռնեցին եւ պատրաստվեցին զէնքով դիմադրել անգլիացիներին։ Այս տեսնելով, անգլիացիները կռուի մէջ չը մտան եւ դատարկձեռն յետ գնացին։ Ռուսաց զօրքերի հրամանատար գեներալ Վոգակ եւ բրիտանական գեներալ Կեմպբէլ խորհրդակցութիւն ունեցան այդ մասին եւ յետաձգեցին վճիռը, մինչեւ որ հրահանգներ ստացվեն Լօնդոնից եւ Պետերբուրգից։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

10 մարտի

ԿԻԵՎ։ Գիշերը ձիւն եկաւ, մի քանի անգամ բուք սկսվեց, տաքութիւնը զրօին մօտ է. ձիւնի շերտը հաստ է։

ԶԻՍՏՕՊՕԼ։ Տաք է եւ անձրեւային. ճանապարհների վրա երեւաց ջուր. ապրանքներ չեն բերում։

ՏԻՖԼԻՍ։ Եղանակը տաք է. ճանապարհը փչացաւ։

ՀԵՂՍԻՆԳՖՕՐՍ։ Մարտի 1-ին պետական խորհրդական Բերենդաս ուղարկեց Պետերբուրգ Ֆինլանդական ստատս-սեկրետարիատի գործերը 1809—1825 թուերին վերաբերեալ, որոնք Բարձրագոյն հրամանով Ֆինլանդական ստատս-արխիվից յանձնվում են պետական արխիվը։

ԵՕԿՕՀԱՄԱ։ Կօրէյական կառավարութիւնը յայտարարում է, թէ ինքը նշանակում է դեսպաններ, որոնք պէտք է գտնվեն զանազան օտար պետութիւնների մօտ։ Կարծում են, որ այդ բանը անվում է այն նպատակով, որպէս զի դեսպանները պաշտպանեն Կօրէյական թերակղզու ամբողջութիւնը։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Հաղորդում են, թէ Դեվէտ Սէնէկալի մօտ հողի տակից հանեց երկու թնդանօթ, որոնք երբեմն պատկանում էին Պրինսլօին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ասում են, թէ Զինաստանը 200 միլիոն դօլարից աւելի չէ կարող վճարել։ Ամերիկան բաւականանում է 25 միլիոնով եւ պատրաստ է դեռ էլի պակասեցնել իր պահանջները, եթէ ուրիշ պետութիւններ կը համաձայնվեն համապատասխան կերպով կրճատել իրանց պահանջները։ Ամերիկան մինչեւ անգամ համաձայն է, որ ընդամենը պահանջվի հարիւր միլիոն, բայց իր պարտաւորութիւնն է համարում ապահովել իր հայրենակիցների եւ իր պետութեան վարձատրութիւնը, համապատասխան ուրիշ պետութիւնների պահանջների չափերին։

Կ. ՊՕԼԻՍ։ Մինիստրների խորհուրդը կարծիք յայտնեց ի նպաստ դիֆէրէնցիալ տարիֆի վերացման Ցունաստանի վերաբերմամբ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Զեմբերլէն յայտնում է, որ Կիտչենէրի դրած պահանջների դէմ ոչինչ առանձին առարկութիւններ չեղան։ Բոտա իր կողմից չարեց առաջարկութիւններ։ Մասնաւոր հեռագրի մէջ Կիտչենէր հաղորդում է, որ Բոտա շատ խիստ ոճով էր խօսում Միլնէրի հետ։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Երէկ սկսվեցին սենատի ընտրութիւնները. ազատամիտները ստացան 53 տեղ, պահպանողականները—3 տեղ։

11 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պէրմի նահանգում Իւ. Բ. Պոպովի Գօրա Պավդինսկայա անունով 330 հազար դեսիատին ունեցող կալուածքը, որ յայտնի է իր ահագին կուսական հանքային եւ անտառային հարստութիւններով, գնեց Խէրսօնի կալուածատէր կոմս Վ. Վ. Ստենբօկ—Ֆէրմօր։

ՎԻԼՆՕ։ Երկաթուղիական գնացքների երթեւեկութիւնը Վիլնօի եւ Բարանովիչի միջեւ դժուարացած է ձնախառն փոթորիկի պատճառով։

ՊԷՔԻՆ։ Գերմանական, անգլիական, ֆրանսիական եւ եապօնական դեսպանները հաւաքվելով մասնաժողով կազմեցին քննելու համար Զինաստանի նիւթական միջոցները եւ մշակելու համար պատերազմական ծախսերը ստանալու ու մասնաւոր անձանց պահանջներին բաւարարութիւն տալու եղանակները։

ՎԻԵՆՆԱ։ Լուր է պտտում, թէ այն պատգամաւորութեան այսօրվայ նիստի մէջ, որը որոշում է Աւստրիայի եւ Ունգարիայի մասնակցութեան չափը հասարակական ծախսերի մէջ, ընդունվեց զեկուցանող Բէրի առաջարկութիւնը այն բանի մասին, որպէս զի Աւստրիայի մասը որոշվի 65,4%, իսկ Ունգարիայի մասը—34,6%։ Այդ չափերը փոխելու համար եղած բոլոր առաջարկութիւնները մերժված են։ Նոյն հարցի վերաբերմամբ ունգարական պատգամաւորութեան հետ բանակցելու համար ընտրված է մի ենթայանձնաժողով եօթը անդամներից։

ՇԱՆԳՀԱԻ։ Գեներալ Գէզլի ժամանեց այստեղ։

Եապօնական նաւատորմի մոբիլիզացիայի եւ այն բանի մասին տարածված լուրը, թէ ռուսաց նաւատորմը գումարվում է Կօրէյայի մօտ,—չէ հաստատվում։

12 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մօսկվայից, Խարկովից եւ Նովգորոդից հաղորդում են, որ գոհացողական մաղթանքներ են կատարվել սրբազան սինոդի օբէր—պրոկուրոր Պօբեդոնոսցեվի՝ վտանգից ազատվելու առիթով։

ԶԵՐՆԻԳՕՎ։ Զերնիգովի բանտից փախաւ սրբապղծութեան համար տաժանակիր աշխատանքների դատապարտված կալանաւոր Զերնօբրիվցեվ (Պոլիվոդա մականունով)։ Զերնօբրիվցեվ այս երկրորդ անգամն է փախչում. առաջին անգամ փախել էր դատից առաջ։

ԴՈՒՐԲԱՆ։ Վլակլազէյից դէպի հիւսիս մօտ 400 բօէրներ ջախջախեցին մթերքատար գնացքը եւ հեռացան, տանելով հետները մի քանի վագոնների բեռը։

ՄՕՍԿՎԱ։ Ժողովրդական լուսաւորութեան հարցերին նուիրված համաժողովը վերջացաւ։ Համաժողովը այն կարծիքը յայտնեց, թէ դաստիարակութեան խնդրին պէտք է առաջնակարգ նշանակութիւն տրվի եւ թէ դպրոցական կարգապահութիւնը պէտք է հիմնված լինի ուսուցիչների եւ աշակերտների փոխադարձ սիրոյ եւ յարգանքի վրա։ Ոչ մի մարմնական պատիժ չը պէտք է գործադրվի տարրական դպրոցներում, ուստի եւ ցանկալի է, որ չնչվի ծխական

դպրոցների 1828 թւի կանոնադրութեան 31 յօդուածը, որով թոյլ են տրվում մարմնական պատիժներ։ Ցանկալի է, որ կանանց պրոգիմնազիաներին եւ քաղաքային դպրոցներին կից հիմնվեն մանկավարժական դասարաններ՝ ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ պատրաստելու համար։ Բժիշկներին պէտք է իրաւունք տալ առ ժամանակ փակել ուսումնարանները, երբ նրանց մէջ համաճարակ հիւանդութիւն է լինում։ Համաժողովը այն կարծիքն յայտնեց, թէ ցանկալի չէ, որ տարրական դպրոցներում արհեստներ սովորեցնեն. արհեստներ սովորեցնելու համար պէտք է գոյութիւն ունենան յատուկ դպրոցներ։ Ցանկալի է համարվում, որ տարրական դպրոցի դասընթացքը տեւի չորս տարի եւ ծրագրի մէջ մտցնվեն գծագրութիւն եւ նկարչութիւն։ Ցանկալի է վարժեցնել ձեռքի աշխատանքների, սովորեցնելով պատրաստել տան մէջ գործածվող առարկաներ։ Ցանկալի է, որ ուսուցիչների մէջ տարածվեն գիւղատնտեսական գիտելիքներ, հիմնելով մասնագիտական պարբերական կուրսեր եւ դպրոցական պարտէզներ ու բանջարանոցներ։ Ցանկալի է, որ մշակվի գործարանական երկաթեայ դպրոցի նոր տիպ, որը յարմարեցրած լինի բանուորների երեխաների ուսուցման համար։ Ցանկալի է, որ լայն կերպով տարածվեն արտադպրոցական կրթութեան նպաստող ընկերութիւնները, այն պայմանով, որ նրանք կարողանան գործել ինքնուրոյն կերպով։ Համաժողովը վճռեց միջնորդել, որ ուսուցիչներին թոյլ տրվի դպրոցների շէնքում զրոյցներ անել ժողովրդի հետ միմիայն մերձաւոր իշխանութեան գիտութեամբ,—մասնաւոր ընկերութիւնների եւ ժուժկալութեան խնամակալութիւնների խնդիրքով թոյլ տրվեն ժողովրդական ընթերցանութիւններ՝ այդ նպատակի համար հաւանութեան արժանացած գրքոյկներով,—թոյլ տրվի կարդալ ժողովրդական լսարաններում այն գրքերը, որ մինիստրութիւնը թոյլ է տուել ունենալ ժողովրդական գրադարաններում, եւ որ թոյլ տրվի ժողովրդական ընթերցանութեան ժամանակ զրոյցներ անել եւ բերանացի բացատրութիւններ տալ մոգական լապտերով ցոյց տրվող պատկերների մասին։

ՏԵԱՆՋԻՆ։ Ռուսաց «Աբօ» պատերազմական նաւը հասաւ այստեղ եւ կանգ առաւ արտաքին նաւահանգստում։ Տակուի մօտ կանգնած են հետեւեալ ռուսական նաւերը՝ «Կօրնիլով», «Դմիտրիյ Դոնսկոյ», «Գիլեակ» եւ «Բօբր», ֆրանսիական «Redoutable» եւ «Bengale» նաւերը եւ մի հատ գերմանական նաւ—«Fürst Bismark»։

Այստեղ հասան հարիւր հոգի հօնգկօնգեան գնդի ուէլսեան հրացանաձիգներից։ Երկուշաբթի աւատրալիացիները կերթան։

ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ԳՈՆՉԱԿ, Ստ. Տ.—Ա. Ձեր յիշած յօդուածը անկարող եղանք տպագրել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։			№ 3 գնացքը.		
Բաքուից դուրս է գալիս ցեր.	3 ժ.	5 ր.	գիշ.	11 ժ.	15 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 »	23 »	եր.	5 »	35 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 »	3 »	եր.	6 »	30 »
Բաթում է հասնում եր.	9 »	11 »	առ.	7 »	10 »
№ 6 գնացքը։			**№ 4 գնացքը.**		
Բաթումից դուրս է գալիս առ.	8 ժ.	56 ր.	եր.	10 ժ.	47 ր.
Թիֆլիս է հասնում եր.	8 »	42 »	առ.	11 »	18 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 »	22 »	»	12 »	36 »
Բաքու է հասնում ցեր.	1 »	25 «	»	7 »	— »

արագ գնացք

Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

Թիֆլիսից դուրս է գալիս.	առաւ.	7 ժ.	56 ր.
Բաքու է հասնում	երեկ.	9 »	— »
Բաքուից դուրս է գալիս	առաւ.	6 »	50 »
Թիֆլիս է հասնում	երեկ.	8 »	12 »
—			
Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	10 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ.	8 »	27 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	23 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	4 »	12 »
Ալէքսանդրոպոլ հասնում է	երեկ.	7 »	40 »
Թիֆլիս հասնում է	առ.	6 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա. Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) եւ միզասեռ. հիւանդ.
Ն. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ա. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Թարանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Ցպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), և վներ. հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Վարձով է տրվում 6 սենեակից բաղկացած ընակարան վաննայով, անցկացրած ջրով եւ ուրիշ յարմարութիւններով, Բակինսկայա (Միխայլովսկայա, Իւնկերների դպրոցի մօտ), 14.
1—3

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Պաստէօրի սիստէմով պատրաստված եւ Շերամապահական կայարանի սպիտակ բանդերօլով, հետեւեալ ֆիրմաների «Բէրթէ եւ ընկ.», Եղբարք Սօթիրիատի եւ այլոց։ Ծախվում է ֆրանսիական ընկերութեան գրասենակում № 127 նախկին Արծրունի գալլէրէայում։ (եր. հինգ.) 1—2

ГАРМОНІИ

Высылаю во всѣ города Россіи какъ своей фабрики, такъ и кустарнаго производства, по самымъ умѣреннымъ цѣнамъ, цѣною отъ 30 коп. до 10 руб. При требованіи прилагать 20 р. задатокъ. Требованіе на сумму менѣе 25 руб. не исполняется. Адресъ: Тула, Веневская улица, магазинъ В. Д. Грецова.

Съ совершеннымъ почтеніемъ
6—10 В. ГРЕЦОВЪ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, մարտի 13-ին,

Պ.պ. անդամների, կադիդատների եւ նրանց ընտանիքների համար ֆիզիկական-գիտական նել կայացում կը տան

Ա. Ա. ՎԵՐԵԳՕ-ԴՈՐՕՎՍԿԻ

Եւ գուշակող

ՏԻԿԻՆ ՕՏՕԼԻԱ ԲԷՍՏԱ

Սկիզբը երեկոյեան 8½ ժամին։ Տեղերի գներ։ 1 ր. 50—30 կոպէկ։

Տոմսակները ծախվում են ժողովարանի դրան մօտ։ 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան վ-ղոց և Բաղում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պաստով։
78—100

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երեքշաբթի, մարտի 13-ին

Բաղուի հայ դրամատիկ դերասանական ընկերութիւնը
ի նպաստ
Պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ եւ Ա. ՎՐՈՑՐԻ
կը ներկայացնէ առաջին անգամ Սէրվանտէսի հռչակաւոր երկը

ԴՕՆ ՔԻՇՈՏ
ԼԱՄԱՆՇԵՑԻՆ

5 գործող. փոխադր. Սարդուի. թարգմ. Ալաքսեանի

Դօն Քիշոտի դերը կը կատարէ Ա. ՎՐՈՑՐ
Սանչօ-Պանչօի » » Պ. ԱՐԱՔՍԵԱՆ

Այս պիէսի համար պատրաստված են նոր դէկորացիաներ, ակսէսուար եւ չարժվող հողմաղաց։

Տեղերի գինը սովորական է։
Տոմսակները ծախվում են միմիայն կասայում։
Սկիզբը երեկոյեան ճիշդ 8 ժամին։
(հ. կ. երեք.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի կառապանների համար սահմանված պարտաւորական կանոնների 13-երորդ յօդուածի հիման վրա, յայտնում է կառապանների եւ սայլապանների, որ վարչութիւնը նշանակել է նրանց ստարօստայի եւ կանդիդատների ընտրութիւն քաղաքային վարչութեան բնակարանում՝ կառապանների համար—մարտի 15-ին, հինգշաբթի, ժամի 3-ին կէսօրից յետոյ եւ սայլապանների համար—մարտի 18-ի կիրակի, առաւօտեան ժամի 10-ին, ուստի խնդրում է բոլորին նշանակած ժամանակին չնորհ բերել քաղաքային վարչութեան բնակարանը իրանց ունեցած՝ կառապանին յատուկ նշանով կամ նրանց տուած գրքոյկներով։
2—3

Մամուլի տակ է
Բժ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
,,ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԻ''
Առաջին գրքոյկը
,,ՄԻ ԽՄԻՐ''

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա դիւանատունը մարտի 13-ին, ցերեկվայ 1 ժամին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու բեռների այն ջրային շինութեան աշխատանքները, որ պէտք է սկսվի Պանասեվիչի փողոցից մինչեւ Բաշինջաղովի տունը, Գոնչարնայա փողոցի վրա, Թիֆլիս քաղաքի 8-րդ քաղաքամասում, մօտ 195 սաժ. երկարութեամբ եւ 2665 ր. արժողութեամբ։ Ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 2—3

Խնդրում եմ ուղարկել ինձ այնպիսի ԵՐԳԵՐ՝ որոնք տակաւին չեն տպագրված։ Հաւցէս՝ Протоіерею Григорію Григоріанцъ, въ Баку.
2—3

ՐՕՍՏՕՎ-ԴՈՆԵԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ

ընկերութիւնը, որ գտնվում է Ռօստովում, սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ պ. Տ. Ի. Դաւիդով 1900 թւականի նոյեմբերի 28-ից այլ եւս չէ ծառայում ընկերութեան մէջ եւ նրա կապած պայմաններն ու նրան տուած հաւատարմագիրը ոչնչացված են նոյն թւին։ 2—2

Ընկերութիւն
ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.
ԾԱՂԿԱՑԻՆ

զանազան հոտեր ունեցող

Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ

հնարողներ.

Նոր հոտերով

«ՕՐԽԻԴԷՑԵԱ»
«ՎԵՒԿՕՑ»
«ԽՆՁՈՐԵՆՈՒ ԾԱՂԻԿ»
«ՄԻՄՕԶԱ»

Սրուակը 1 ր.
½ » — 60 կ.
⅓ ֆ. 1 ր. 75 կ.

104,035 (ամս. 5) 4—10

Հրդեհից փոխադարձապէս ապահովագրելու Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնը

այնտեղ է ի գիտութիւն պ.պ. ապահովագրող անդամների, որ ընկերութեան կանոնադրութեան 37-երորդ յօդուածի համաձայն, հաշիւը ընկերութեան գործերի դրութեան մասին 1900 թւի ընթացքում, գրքերի եւ վաւերաթղթերի հետ միասին,

ԿԱՐԵԼԻ ԷՏԵՍՆԵԼ

վարչութեան բնակարանում, ցերեկվայ ժամի 12-ից մինչեւ 2-ը։ 2—2

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Հատոր առաջին։—XVI—XVII դար
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 10—10

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում

ծախվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը՝

Ալխազեանց Ա. սարկ., Համառօտ ձեռնարկ ծաղկահատութեան կամ ծաղկի պատուաստման, Թիֆլիս, 1901 թ. 5 կոպ.։
Ահարոնեան Ա., Պատկերներ, Մոսկվա, 1900 թ. 1 ր.։
Աղանէյան Գ. ա. քահ., Լումայ, գրական հանդէս, վեցերորդ տարի, գ. ա. 1901 թ. փետր. Թիֆ. գ. 2 ր.։
Զահրիեանց Ս., Պոլի-Բէգ (Քեօռ-օղլու հէքիաթներից մէկը), Ալէքս. 1900 թ. 35 կ.։
Լալայեանց Ե., Գանձակի գաւառ, հատ. ա., Թիֆլ. 1901 թ. 80 կ.։
Կորոլենկօ Վ., Կոյր երաժիշտ (էտիւդ), Թիֆլ. 1901 թ. 60 կ.։
Ճանիկեան Ց., Դժոխք (բարոյական) հատ. բ., մ. բ., Թիֆլիս 1900 թ. 30 կ.։
Էօժէն-Սիւ, Թափառական հրէայ, 4 հատոր (հազուագիւտ), Կ. Պոլիս, գ. 10 ր., կազմած 10 ր. 80 կոպ.։
Վորոնովա Ի., Մագնիս («Նուէր մանուկներին» սերիայից), Թիֆլ. 1901 թ. 12 կ.։
Տաղավարեան Ն. Բժ., Դարվինականութիւն, Պոլիս, 1901 թ. 30 կ.։
Որբունի կամ պատկերազարդ բացառիկ Բազմավէպ, Վենետիկ, 1900 թ. գ. 1 ր.։
Զէյթունցի, Զէյթունի անցեալէն եւ ներկայէն ա. մ. Վիէննա 1900 թ. գ. 1 ր. 50 կ.։
Սաղմոս՝ մեծադիր, Պոլիս, գ. 60 կ.։
» փոքրադիր. Պոլիս, 1 ր.։
» թաւիշով պատած եւ ոսկեզօծ, Պոլիս, 2 ր.։
Պարտէզ հոգեւոր՝ թաւիշով պատած եւ ոսկեզօծ, Պոլիս, 2 ր.։
Միրախորեան Մ., Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի, Պոլիս, գ. 3 ր.։

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Ե.) 2—5

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Марта 1901 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27